



Ծրագիրը ֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից



2018թ. ԱՐՏԱՅԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԵՏԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕՆԼԱՅՆ ՀԱՐԹԱԿՆԵՐՈՒՄ



ԵՐԵՎԱՆ
2019

Սույն հետազոտությունն անցկացվել է Եվրոպական Միության ֆինանսական աջակցությամբ: Այստեղ ներկայացված բովանդակության համար պատասխանատու է Ռեգիոն հետազոտական կենտրոնը, և այն պարտադիր չէ, որ արտացոլի Եվրոպական Միության տեսակետները:

Հետազոտության

*մեթոդաբանությունը եւ արդյունքների վերլուծությունը՝
Ռեգիոն կենտրոնի տնօրեն **Լաուրա Բադդասարյանի***

*Դիտարկման խումբը՝ **Սոնա Զյուրքյան, Անժելա Չոբանյան,
Լիլիթ Միդոյան, Մարինե Սարգսյան, Հրանտ Գալստյան,
Վիկտորիա Բադդասարյան***

*Արդյունքների տեխնիկական մշակումը,
հաշվարկը, աղյուսակներն ու գրաֆիկները՝ **Շողիկ Ստեփանյանի***

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՄԵԹՈՂԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ	4
Ի՞նչ ենք հետազոտել եւ որքա՞ն փուլերով	4
Ինչպե՞ս ենք ընտրել ֆեյսբուքյան էջերը	5
Ի՞նչ թեմա ենք հետազոտել	6
Ի՞նչ սկզբունքներով ենք հաշվարկել տվյալները	7
2018 ԹԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՕՆԼԱՅՆ ՉԼՄ-ՆԵՐՈՒՄ ԵՎ ՄՐՑԱԿԻՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ՖԵՅՍԲՈՒԷՅԱՆ ՀԱՐԹԱԿՆԵՐՈՒՄ	8
ԻՆՉՊԵՍ. Ընտրական թեմաների ինտեսիվությունն օնլայն ՉԼՄ-ներում եւ միջակից քաղուծերի ֆեյսբուքյան էջերում	8
ԻՆՉՊԵՍ. Ընտրությունների վիզուալիզացման մակարդակն օնլայն ՉԼՄ-ներում եւ միջակից քաղուծերի ֆեյսբուքյան էջերում	9
ԻՆՉՊԵՍ. Նախընտրական թեմաներով նյութերի շրջանառություն եւ դեբատներ	12
ԻՆՉՊԵՍ. Քարոզչություն, կոշտ հակաքարոզչություն, ատելության խոսք օնլայն ՉԼՄ-ներում եւ միջակից ուծերի ֆեյսբուքյան հարթակներում	12
Ո՞Վ ՈՐՔԱՆ	15
ԻՆՉԻ՞ ՄԱՍԻՆ. Ընտրական թեմաներն օնլայն ՉԼՄ-ներում	18
Լսարանները եւ նրանց արձագանքները	21
Զվեարկության օր, առաջին հետընտրական արձագանքներ	22
ՆՈՐ ՕՐԱԿԱՐԳԵՐԸ ՀԵՏԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. 2019 Թ. ՀՈՒՆՎԱՐ	24
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ	29
ՀԱՎԵԼՎԱԾ	34

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ. ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Ի՞նչ ենք հետազոտել եւ որքա՞ն փուլերով

Ընտրական գործընթացի հետազոտություն –անցկացրել ենք երեք ամիսների ընթացքում (2018 թ. նոյեմբերի 1- 2019 թ. հունվարի 24)մի քանի փուլերով: Օնլայն ՉԼՄ-ների ու ֆեյսբուքյան բովանդակությունների ըստ փուլերի դասդասման ժամանակ կիրառել ենք տարբեր մոտեցումներ, քանի որ ի տարբերություն օնլայն լրատվամիջոցների ֆեյսբուքում փաստորեն ընտրական բովանդակությունների տարածումը պայմանավորված չի եղել քարոզչության համար սահմանված ժամկետներով:

Այսպես՝ օնլայն ՉԼՄ-ների դեպքում ունեցել ենք հետեւյալ փուլերը.

- Նախընտրական փուլ (2018 թ. նոյեմբերի 1-25), պաշտոնական ընտրարշավ (2018 թ. նոյեմբերի 26-դեկտեմբերի 7), քվեարկության օր (2018 թ. դեկտեմբերի 9), հետընտրական երկու շաբաթներ (2018 թ. դեկտեմբերի 10-24):

Իսկ ֆեյսբուքի դեպքում՝

- Նախապատրաստական, սոցցանցում ընտրարշավի համար դիրքավորման փուլ (2018 թ.նոյեմբերի 1-13), ընտրարշավ (2018 թ. նոյեմբերի 14-դեկտեմբերի 7), քվեարկության օր (2018 թ. դեկտեմբերի 9), հետընտրական երկու շաբաթներ (2018 թ. դեկտեմբերի 10-24):

Հայաստանի իշխանությունների եւ նոր օրակարգերի մասին

հետազոտություն – հետընտրական այս ուսումնասիրության ժամանակ օնլայն լրատվամիջոցների եւ ֆեյսբուքի համար ունեցել ենք մեկ ընդհանուր ժամանակահատված՝ 2019 թ. հունվարի 1-24:

Հետազոտության ողջ ընթացքում ուսումնասիրել ենք հայաստանյան 6 ռեյտինգային օնլայն ՉԼՄ-ների (1in.am, News.am, Aravot.am, Armlur.am, Tert.am, Lragir.am) ընտրական եւ հետընտրական բովանդակությունները:

Ինչպես նաեւ՝ ֆեյսբուքում գործող քաղաքական ուժերի եւ հայաստանյան մի քանի առանձին օգտատերերի էջերը (ընդհանուր առմամբ՝ 32 ֆեյսբուքյան հարթակ):

Այսպես՝

- Նախքան ընտրություններին մասնակցող կուսակցությունների պարզվելը (2018 թ. նոյեմբերի 1-13) հետեւել ենք տարբեր քաղաքական ուժերի ֆեյսբուքյան ակտիվություններին, այս ընթացքում կատարելով էջերի ընտրություն հետագա ավելի խորքային դիտարկումների համար: Իսկ ընտրական գործընթացի համատեքստում հետազոտել ենք մրցակից քաղաքական 11 ուժերի (9 կուսակցությունների եւ 2 դաշինքների) ֆեյսբուքյան հարթակները:
- ընտրություններից հետո սահմանվող նոր օրակարգերի ուսումնասիրության համար բացի վերը նշված հարթակներից դիտարկել ենք նաեւ ընտրություններին չմասնակցած քաղուժերի, մի շարք այլ օգտատերերի (վերլուծաբանների, բլոգերների, այլ մասնագետների) ֆեյսբուքյան էջերը:

Ինչպե՞ս ենք ընտրել ֆեյսբուքյան էջերը

Ֆեյսբուքյան էջերի ընտրությունը կատարել ենք՝

- ըստ օգտատերերի ակտիվության աստիճանի (այն է՝ որքան կյուրթեր եւ որքան հաճախ են թեմայի հետ կապված բովանդակություններ տեղադրում ֆեյսբուքում),
- ըստ էջերի լսարանների մեծության եւ ինտերակտիվ արձագանքների մակարդակի (այն է՝ ըստ էջերը հավանողների եւ հետեւողների ընդհանուր քանակի, ըստ բովանդակությունների հավանումների, տարածումների, մեկնաբանումների քանակի):

Քաղուժերի էջերի ընտրություն - Տարբեր քաղաքական ուժեր ֆեյսբուքում ունեն տարբեր աստիճանի ներկայացվածություն եւ գործում են տարբեր կերպ: Կան կուսակցությունների պաշտոնական էջեր, որոնք ավելի ընդգրկուն բովանդակություններ են սովորաբար տարածում սոցցանցային լսարանների համար, քան նրանց ղեկավարների եւ անդամների էջերը, եւ հակառակը՝ կան ուժեր, որոնք սոցցանցային տիրույթներում ուղերձներ են տարածում իրենց առաջնորդների, ղեկավար մարմինների այլ անդամների էջերի միջոցով: Բացի այդ, կան նաեւ միանգամից երկու-երեք էջեր վարող քաղաքական գործիչներ, որոնք ժամանակ առ ժամանակ ակտիվացնում են գործունեությունն այս կամ այն իրենց հարթակում: Եղել են նաեւ քաղաքական գործիչներ/ուժեր, որոնք ընտրարշավի նախօրեին նոր էջ են բացել հենց այնտեղ այն անցկացնելու համար, կամ՝ առաջին անգամ են գրանցվել ֆեյսբուքում իրենց էջը քարոզարշավի գլխավոր հենակետ դարձնելու նպատակով: Հիմնականում սա է եղել պատճառը, որ հետազոտության համար տարբեր ուժերի դեպքում ընտրել ենք տարբեր քանակի էջեր: Մի դեպքում մենք միանգամից դիտարկել ենք դաշինքի եւ պաշտոնական էջը, եւ այն կազմած կուսակցությունների ղեկավարների էջերը, մյուս դեպքում՝ կուսակցությունների միայն առաջնորդների, երրորդ դեպքում՝ կուսակցությունների միայն պաշտոնական էջերը:

Ոչ քաղաքործիչների էջերի ընտրություն-Այս խմբի օգտագործողների էջերը մենք հետազոտել ենք ընտրություններից հետո, առաջին մեկ ամսվա ընթացքում ֆեյսբուքում իշխանությունների եւ սահմանվող հանրային օրակարգերի մասին հետազոտությունն ամբողջացնելու համար: Սոցցանցում ակտիվ գործող բազմաթիվ վերլուծաբաններից, տարբեր մասնագետներից եւ բլոգերներից մի քանիսին ընտրելիս հաշվի ենք առել նրանց՝ քաղաքական ու հասարակական նշանակության գործընթացների նկատմամբ մինչ այդ արտահայտած վերաբերմունքի բազմազանությունը (որ մեր ցանկում լինեն տարբեր դիրքերից հանդես եկող օգտատերեր), ինչպես նաեւ՝ նրանց սոցցանցային լսարանների չափը, նրանց էջերում դիսկուրս քննարկումների առկայությունը:

Տես Հավելված, Հետազոտված ֆեյսբուքյան էջերի ցանկն ըստ փուլերի:

Ի՞նչ թեմա ենք հետազոտել

Ընդհանուր առմամբ հետազոտել ենք Հայաստանում 2018 թ. դեկտեմբերի 9-ին կայացած արտահերթ խորհրդարանական ընտրությունների թեման օնլայն հարթակներում, ինչպես նաեւ ընտրություններից հետո առաջին ժամանակահատվածում իշխանությունների մասին ծավալված դիսկուրս առանձնահատկությունները, հետհեղափոխական Հայաստանում սահմանված օրակարգերը:

Ընտրական գործընթացների համատեքստում հետազոտել ենք, թե՝

- Ի՞նչ ընդհանուր եւ մասնավոր առանձնահատկություններով են լուսաբանել օնլայն ՉԼՄ-ներն ընտրական գործընթացները:
- Ինչպե՞ս է ընթացել քաղաքական մրցակցությունն օնլայն ՉԼՄ-ներում եւ ֆեյսբուքյան հարթակներում:
- Հատկապես ի՞նչ ուղերձներ են հասցեագրել ընտրազանգվածին մասնակցող եւ չմասնակցող քաղաքական ուժերը, լրագրողները, հասարակական ու մասնագիտական տարբեր ներկայացուցիչներն ու խմբերը:
- Լսարանների ինչպիսի՞ հետաքրքրություն է գրանցվել ընտրական գործընթացների ու շեշտադրվող ուղերձների նկատմամբ:

Հետընտրական առաջին օրակարգերի եւ իշխանությունների մասին ծավալվող դիսկուրսների հետազոտության ժամանակ աչքի առաջ ենք ունեցել, թե՝

- Ի՞նչ հետընտրական օրակարգեր են սահմանվել օկլայն ՉԼՄ-ներում եւ Ֆեյսբուքում,
- Ուլքե՞ր են այդ օրակարգերը սահմանողները՝ քաղաքական ուժե՞րը:
- Իշխանությունները, հանրությունը:
- Ինֆորմացիոն ի՞նչ միջավայր, ի՞նչ վերաբերմունք է եղել այդ օրակարգերի նկատմամբ:

Այս ընթացքում, ի տարբերություն հետազոտության նախորդ փուլերի, կանգ ենք առել միայն իշխանությունների գործունեության եւ սահմանվող օրակարգերի մասին մեկնաբանություններով ու գնահատականներով նյութերի վրա՝ բաց թողնելով այդ նույն թեմաներով օրվա լրատվությունը:

Ի՞նչ սկզբունքներով ենք հաշվարկել տվյալները

- Ընտրությունների եւ ապա հետընտրական նոր օրակարգերի համատեքստում արծարծված թեմաները սահմանել ենք՝ ելնելով օկլայն ՉԼՄ-ներում եւ Ֆեյսբուքյան հարթակներում եղած բովանդակությունների դիսկուրս վերլուծությունից:
- Այս կամ այն թեմայի ինտենսիվությունը չափել ենք **մեկ նյութ-մեկ կամ ավելի խնդիր** սկզբունքով: Ֆեյսբուքյան էջերում մեկ նյութ է համարվել հետազոտության գլխավոր թեմային առնչվող բովանդակությունը՝ ստատուսը, ՉԼՄ-ից բերված նյութը, ֆոտո- եւ տեսանյութը: ՉԼՄ-ից էջ բերված նյութերին ուղեկցող ստատուսները համարել ենք առանձին նյութեր, եթե դրանք ՉԼՄ-ի նյութից վերցված մեջբերումներ չեն եղել:
- Թեմային առնչվող տարբեր խնդիրների մասին հանդես եկող քաղաքական, հասարակական, մասնագիտական եւ այլ խմբերի ներկայացուցիչներին սահմանել ենք որպես թեմայի հեղինակներ: Նրանց ակտիվությունը չափել ենք **մեկ հեղինակ՝մեկ կամ մի քանի թեմա** սկզբունքով:
- Մեկ նյութում արծարծված թեմաների քանակը հաշվարկել ենք ըստ դրանց հեղինակների փոփոխության եւ ըստ ուղերձների նշանների (+, -, 0) փոփոխության **Որքան հեղինակ՝ նույնքան թեմա եւ նույնքան կոնսոտացիոն նշան եւ Որքան կոնսոտացիոն նշան՝ նույնքան թեմա** սկզբունքներով:
- Թեմաների նշանները (+, -, 0) որոշել ենք՝ ելնելով ձեւակերպումների ուղիղ իմաստաբանական (semantic), այլ ոչ թե ենթատեքստային ուղերձներից:


2018 ԹԱՐՏԱՅԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՕՆԼԱՅՆ ՉԼՄ-ՆԵՐՈՒՄ ԵՒ ՄՐՑԱԿԻՑ ԶԱՂԱԶԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ՖԵՅՍԲՈՒԲՅԱՆ ՀԱՐԹԱԿՆԵՐՈՒՄ

(2018 թ. նոյեմբերի 1 - դեկտեմբերի 24)

ԻՆՉՊԵՐՍ. Ընտրական թեմաների ինտեսիվությունն օնլայն ՉԼՄ-ներում եւ միջակից քաղուժերի ֆեյբուքյան էջերում

Ընտրական թեմաներով նյութեր սկսեցին շրջանառվել օնլայն լրատվամիջոցներում 2018 թ. դեկտեմբերի 9-ին արտահերթ ընտրություններ անցկացնելու մասին առաջին իսկ պաշտոնական հաղորդագրության տարածման օրվանից (2018 նոյեմբերի 1): Սրանք հիմնականում օրվա լրատվությամբ նյութեր էին: Թեման իր ողջ ծավալով, հետագայում մեր արձանագրած խնդիրների բազմազանությամբ զարգացավ, ապա եւ սրընթաց ակտիվացավ քաղուժերի մասնակցության համար ԿԸՀ-ում հայտ ներկայացնելուց հետո (2018թ. նոյեմբերի 14), եւ ընդհուպ մինչեւ առաջին հետընտրական օրերը լսարաններին ներկայացվում էր գերինտենսիվ լուսաբանմամբ, նյութերի մեծ քանակով: Պաշտոնական քարոզարշավի ընթացքում մեկ օրում ընտրությունների մասին նյութերի քանակը սովորաբար քիչ քանակի նյութեր արտադրող ՉԼՄ-ներում հասել է մինչեւ 39, իսկ ամեն օր ավելի շատ նյութ հրապարակող ՉԼՄ-ներում՝ մինչեւ 98 նյութի: Ընդ որում՝ այս ինտենսիվությունը պահպանվել է քարոզարշավի բոլոր 12 օրերի ընթացքում:

Տես ստորեւ բերված գրաֆիկը:



Ըստ էության մասնակից քաղութերի նաեւ ֆեյսբուքյան քարոզարշավները սկսվեցին նախքան պաշտոնական ընտրարշավը, ԿԸՀ-ում նրանց գրանցման օրվանից: Սակայն, օնլայն ՉԼՄ-ների նման սոցցանցում էլ քաղութերի ամենից ակտիվ գործողությունները պաշտոնական քարոզարշավի ժամանակ էին իրականացվում (նոյեմբերի 26 -դեկտեմբերի 7): Զենց այդ ընթացքում էլ մեկ օրում նրանք տարածեցին ընտրական թեմայով իրենց նյութերի զգալի մասը:

Տես Զավելված, Աղյուսակ 1:

ԻՆՉՊԵՐՍ. Ընտրությունների վիզուալիզացման մակարդակն օնլայն ՉԼՄ-ներում եւ միջակից քաղութերի ֆեյսբուքյան էջերում


Բարեւ, ես ձեր թեկնածուն եմ

Այս ընտրաշրջանի երկու նախընտրական փուլերում էլ (օնլայն ՉԼՄ-ներում՝ նոյեմբերի 1-25, եւ նոյեմբերի 26-դեկտեմբերի 7, ֆեյսբուքում՝ նոյեմբերի 1-14 եւ նոյեմբերի 14-դեկտեմբերի 7) մեծ թվով բովանդակություններ մատուցվել են լսարաններին տեսանյութերի տեսքով: Հատկապես պաշտոնական քարոզարշավի ընթացքում դրանք մեծ տեւողության տեսանյութեր են եղել՝ սկսած ընտրազանգվածի հետ տարբեր ուժերի օֆլայն հանդիպումների ուղիղ միացումներից, մինչեւ սեփական եւ այլ ՉԼՄ-ների պատրաստած տեսանյութերը, այդ թվում՝ հեռուստահաղորդումները :


Այսպես օրինակ, պաշտոնական քարոզարշավի օրերին 6-ից 4 օնլայն ՉԼՄ-ներում տեսանյութերն էական մասնաբաժին են կազմել ընտրությունների մասին նյութերի ողջ զանգվածում (1in.am-ում դրանք կազմել են ընտրությունների մասին բոլոր նյութերի 52%, Armlur.am-ում՝ 39%, News.am -ում՝ 33% Tert.am -ում՝ 24%): Aravot.am-ում եւ Lragir.am-ում այս անգամ էլ պահպանվել են ավանդույթները, այստեղ տեսանյութերի քանակն էականորեն զիջել է տեքստային նյութերի քանակին:

Տես ստորեւ բերված գրաֆիկները, նաեւ՝ Զավելված, Աղյուսակներ 2 եւ 3:

Տեսանյութերի մասնաբաժինը օնլայն ՉԼՄ-ներում



Ուղիղ միացումներով քարոզարշավը /օնլայն ՉԼՄ-ներ




Էլ ավելի մեծ է եղել մրցակից ուժերի ֆեյսբուքյան քարոզարշավների վիզուալիզացման աստիճանը, մի շարք էջերում տեսանյութերի քանակը պաշտոնական քարոզարշավի ընթացքում հասնում էր մինչև 90%:

Պաշտոնական քարոզարշավի ընթացքում դրանց մեջ շոշափելի մաս են կազմել ուղիղ եթերները՝ օֆլայն քարոզարշավներից սեփական ՖԲ-յան միացումները եւ առանձին գործիչների ուղիղ միացումներով քարոզչական եւ հակաքարոզչական բնույթի ելույթները:

Տես Հավելված, Աղյուսակ 4:

Այս ընտրարշավի նորությունը Ֆեյսբուքում ուղիղ եթերների օգտագործումն էր տարբեր ուժեր ներկայացնող ավելի շատ քանակի թեկնածուների կողմից (օրինակ՝ ՀՀԿ-ից Արմեն Աշոտյան, Արփիկ Ռոմիկյանիսյան, Էդուարդ Շարմազանով): Ստաբիլ բնույթի են եղել այդ ընթացքում վարչապետի պաշտոնակատար Նիկոլ Փաշինյանի, Լուսավոր Հայաստան կուսակցության ղեկավար Էդմոն Մարուքյանի էջերում ուղիղ եթերների հրապարակումները: Նիկոլ Փաշինյանի էջում դրանք հասել են մինչև 71%: Բացի օրվա օֆլայն քարոզարշավների ուղիղ եթերներ ապահովելուց Էդմոն Մարուքյանն իր էջում ուղիղ միացումներով ի մի էր բերում անցնող օրվա արդյունքները:

Տես ստորել բերված գրաֆիկը:



ԻՆՉՊԵՍ. Նախընտրական թեմաներով նյութերի շրջանառություն եւ դեբատներ

Այս ընտրարշավի ժամանակ էլ եղավ տարբեր ընտրական թեմաներով նյութերի շրջանառություն սոցցանցերի, օնլայն լրատվամիջոցների եւ հեռուստատեսության միջեւ: Մեր ուսումնասիրած ՉԼՄ-ներում նկատելի մաս են կազմել մրցակից ուժերի ՖԲ էջերից վերցված նյութերը: Օրինակ՝ մրցակիցների միջեւ Ֆեյսբուքում ընթացող հեռակա բանավեճերը, նրանց հաղորդագրությունները հաջորդ քարոզարշավային օրվա աշխարհագրության, ժամանակացույցի մասին եւ այլն:

Օնլայն ՉԼՄ-ներում այս ընթացքում հրապարակվել են նաեւ հեռուստատեսային բանավիճային տարբեր հաղորդումների տեսագրություններ: Օրինակ՝ Aravot.am-ը, News.am-ը հրապարակեցին դեկտեմբերի 5-ին Հանրային հեռուստատեսության կազմակերպած **մեծ դեբատների** ամբողջական, 3,5 ժամանոց տեսագրությունը: News.am-ն իր կայքում տեղադրեց Արարատ ՀԸ **Ղեմ առ ղեմ** դարձյալ սուր բանավիճային հաղորդաշարի մի քանի թողարկումներ ՀՀԿ-ի եւ Իմ քայլը դաշինքի ներկայացուցիչների մասնակցությամբ եւ այլն:

Ի տարբերություն այլ օնլայն ՉԼՄ-ների, մրցակից քաղուժերի թեկնածուների միջեւ բանավեճեր է կազմակերպել 1in.am-ն իր ինտերնետ հաղորդաշարի շրջանակներում:

Թեկնածուների եւ ուժերի միջեւ բանավեճերն ընթացել են ոչ միայն ղեմ առ ղեմ սկզբունքով, ՉԼՄ-ների միջնորդությամբ, այլեւ հեռակա կարգով՝ ՖԲ-յան տիրույթներում, երբ մի թեկնածուի՝ իր էջում գրած ստատուսին մեկ այլ թեկնածու արձագանքել է սեփական էջում: Նախկին ընտրական գործընթացների նման (2012թ., 2013թ., 2017թ.) այս անգամ էլ մեզ չի հանդիպել դեպք, որ մի թեկնածուն բանավեճի ընթացքում խախտի մրցակցի ֆեյսբուքյան տիրույթների սահմանները եւ մեկնաբանություններ անի նրա էջում:

ԻՆՉՊԵՍ. Քարոզչություն, կոշտ հակաքարոզչություն, ատելության խոսք օնլայն ՉԼՄ-ներում եւ մրցակից ուժերի ֆեյսբուքյան հարթակներում

Մրցակից ուժերի քարոզարշավն ըստ էության օնլայն հարթակներում, իսկ Իմ քայլը դաշինքի դեպքում նաեւ օֆլայն ռեժիմով մեկնարկեց սահմանված պաշտոնական ժամկետից շուտ: Քաղուժերը ընտրապայքարն առաջ էին մղում ինչպես օնլայն ՉԼՄ-ներում եւ ֆեյսբուքում սեփական ծրագրերի ներկայացման, թիմակիցների օգտին տարվող քարոզչության, ֆեյսբուքում եւ օնլայն ՉԼՄ-ներում գովազդներ տեղադրելու միջոցով, այնպես էլ մրցակից ուժերի դեմ տարվող կոշտ հակաքարոզչության, երբեմն նաեւ՝ ատելության խոսքի կիրառմամբ:

Քարոզարշավի բնույթի մասին այդ շրջանում տարածված եւ ակտիվորեն շրջանառվող պնդումներ կային մրցակցության անսափադեպ անհանդուրժական եւ ատելության մթնոլորտի մասին: Սակայն մեր տվյալները վկայում են, որ այդ տպավորությունը ձեւավորվել էր մի քանի սկանդալային, հեռակա եւ դեմ առ դեմ վերբալ բախումներից, որոնք տեւական բնույթ ունեցան, թեմաներն անընդհատ կրկնելու միջոցով: Օրինակ, Ղարաբաղյան հակամարտության թեմայով իմ քայլը դաշինքի ներկայացուցիչ Ս. Միքայելյանի պաշտոնական քարոզարշավի առաջին իսկ օրվա հայտարարությունը Արցախյան պատերազմի եւ Հայաստանում թավջա հեղափոխության համեմատություններով անմիջապես հակադարձվեց ՀՀԿ-ի եւ այլ ուժերի կողմից, դարձավ իմ քայլի եւ ՀՀԿ-ի միջեւ հրապարակային սուր բախումների առիթ ընդհուպ մինչեւ քարոզարշավի ավարտը:

Կոշտ դիմակայությունն իմ քայլը դաշինքի եւ ՀՀԿ-ի միջեւ ընթանում էր տարբեր մասնակիցներով, ցուցակները գլխավորող առաջնորդներից (Ն. Փաշինյան-Վ.Սարգսյան) մինչեւ այլ թեկնածուներ (Ա.Աշոտյան-Ա.Հարությունյան, Ա.Հովհաննիսյան -Լ.Նազարյան, Ա.Աշոտյան-Ռ.Ռուբինյան, Ս.Միքայելյան-Դ.Շահնազարյան):

Այդպես ստացվեց, որ քարոզարշավի ժամանակ ընդհանուր մթնոլորտի եւ ատելության խոսքի մասին ելույթներն ավելի շատ էին, քան այդ ատելության խոսքի կոնկրետ օրինակները:

Մյուս կողմից, գործում էր բոլորը բոլորի դեմ սկզբունքը: Խաչածեւ եթե ոչ հակաքարոզչություն, ապա քննադատական ելույթներ եղել են նաեւ ԱԺ-ում երկրորդ, երրորդ տեղերի համար պայքարող ուժերի, ինչպես նաեւ նորաստեղծ կուսակցությունների շրջանում:

Այսպես,

- **Վարչապետի պաշտոնակատարը** պաշտոնական քարոզչության ընթացքում իր շոշափած 24 թեմաներից 16 -ով բացասաբար հիշատակել է ՀՀԿ-ին եւ նրա ղեկավարին:
- **Իմ քայլի (-)** հիշատակումները վերաբերվել են հիմնականում ՀՀԿ-ին, այնուհետեւ՝ ԲՀԿ-ին, ՀՀԴ-ին, ԶՈ ՍԴԿ-ին, Մենք-ին:
- **ՀՀԿ-ն** 18 թեմաներից 18-ով էլ (-) նշանով հիշատակել է վարչապետին, 18-ից 12-ով (-) նշանով խոսել է կառավարության, իմ քայլը դաշինքի մասին, բացասական գնահատականներ է տվել նաեւ՝ Սասնա ծռերին, Մենք-ին, ԶՈ ՍԴԿ-ին, ՀԺԺ Վեաճննդին, Ազգային առաջընթացին:
- **ԲՀԿ-ի (-)** նշանով մրցակիցների մասին խոսքը եղել է վարչապետի, ՀՀԿ-ի, ԼՀԿ-ի, ՀՀԴ-ի, իմ քայլի, Ծռերի, ՕԵԿ-ի մասին:
- **ՀՀԴ-ն** կառավարության մասին խոսել է միայն (-) նշանով: Այդպիսի գնահատականներ եղել են նաեւ՝ վարչապետի, իմ քայլի, ՀՀԿ-ի եւ ԼՀԿ-ի մասին:

- **ԼՅԿ -ն** (-) նշանով գնահատականներ հնչեցրել է ՀՀԿ-ի, ԲՀԿ-ի, Սասնա ծռերի, ՀՀԴ-ի, Ազգային առաջընթացի հասցեին:
- **Սասնա ծռերը** (-) նշանով խոսել են ՀՀԿ-ի, ԲՀԿ-ի, ՀՀԴ-ի, ՕԵԿ-ի, ԼՀԿ-ի մասին:
- **ԶՈ ՍԴԿ-ն** (-) նշանով գնահատականներ հնչեցրել է ՀՀԿ-ի, վարչապետի, կառավարության եւ Իմ քայլի, ինչպես նաեւ՝ ՀՀԴ-ի եւ ՕԵԿ-ի հասցեին:
- **Մենքը** (-) նշանով գնահատականներ հնչեցրել է ՀՀԿ-ի, այնուհետեւ՝ Իմ քայլի եւ վարչապետի, ավելի քիչ անգամ՝ ԲՀԿ-ի, ՀՀԴ-ի, Սասնա ծռերի, ՕԵԿ-ի եւ ԶՈ ՍԴԿ-ի հասցեին:
- **ՀԶԺ Վերածնունդը** (-) նշանով գնահատականներ հնչեցրել է Իմ քայլի եւ կառավարության, ՀՀԿ-ի, ԲՀԿ-ի, ՀՀԴ-ի, ՕԵԿ-ի հասցեին: Վարչապետին ընդհանրապես (-) գնահատական չի տվել:
- **Ազգային առաջընթացը** նույնպես վարչապետի մասին (-) նշանով չի խոսել, փոխարենն այդպես արտահայտվել է ՀՀԿ-ի, ԲՀԿ-ի, Իմ քայլի, ԼՀԿ-ի, ՕԵԿ-ի եւ ՀՀԴ-ի մասին:

Սակայն ընդհանուր ցուցանիշներով 11-ից 8 ուժեր (Իմ քայլը դաշինքը, ԼՀԿ-ն, Սասնա ծռեր կուսակցությունը, ՕԵԿ-ը, ԶՈ ՍԴԿ-ն, Մենք դաշինքը, Ազգային առաջընթացը, ՀԶԺ Վերածնունդը), նաեւ՝ վարչապետը մրցակիցների մասին խոսել են գրեթե համաչափ դրական, բացասական եւ չեզոք իմաստաբանական նշանի գնահատականներով:

ՀՀԿ-ի թեկնածուների վարած քարոզարշավը գլխավորապես կառուցված է եղել հակաքարոզչության վրա: Այս ուժի հնչեցրած բացասական նշանով հայտարարություններն ու մեկնաբանությունները զգալիորեն, գրեթե կրկնակի անգամ գերազնացել են դրական եւ չեզոք գնահատականներին միասին վերցրած:

ՀՀԴ-ն այս ընտրապայքարում ավելի շատ հանդես է եկել բացասական եւ դրական խոսքով: Այս ուժի չեզոք նշանով հնչեցրած խոսքն օկային ՉԼՄ-ներում ավելի քիչ է եղել, քան դրական կամ բացասական գնահատականներով:

ԲՀԿ-ի դեպքում պատկերը ինչ-որ տեղ հակառակն է եղել: Այս ուժը մրցակիցների մասին ավելի շատ խոսել է կամ դրական, կամ չեզոք նշաններով, բացասական հայտարարություններն ու գնահատականներն էականորեն ավելի քիչ քանակի են եղել:

Տես Հավելված, Աղյուսակ 5:

Այլ է եղել պատկերը Ֆեյսբուքում: Այստեղ մրցակից ուժերի ներկայացուցիչները ոչ միայն լայնորեն հակաքարոզչություն են իրականացրել, այլեւ իրենց էջերում հանդուրժել են, չեն ջնջել այսպես կոչված սովորական օգտատերերի ատելության խոսքով մեկնաբանությունները:

Ընտրապայքարի ժամանակ սոցցանցային տիրույթում կտրուկ աճել էր տարբեր խմբերի դեմ համախոհների ու ֆեյքերի միջոցով գործելու միտումը: Շրջանառվում են տարբեր թվեր ֆեյսբուքի հայաստանյան հատվածում հենց այս, ներքաղաքական նպատակներով անհատ անուն ազգանվամբ, կամ որեւէ նշանաբանի կիրառմամբ ֆեյք էջերի քանակի մասին: Որոնք ոչ միայն ապատեղեկատվություն էին տարածում, այլեւ ակտիվորեն մեկնաբանում էին քաղաքական ուժերի հետ կապված տարբեր բովանդակությունները սոցցանցում: Արձանագրել ենք նաեւ դեպքեր, երբ առանձին թեկնածուներ այլ օգտատետերի էջերից իրենց էջ են բերել մրցակիցների հասցեին ուղղված ոչ նորմատիվային բառապաշարով ստատուսներ:

Մրցակից ուժերը նաեւ պատրաստել են հակաքարոզչական բնույթի տեսահոլովակներ եւ տարածել իրենց էջերի միջոցով: Օրինակ, Ազգային առաջընթաց կուսակցության պաշտոնական էջում տեղադրվել են **Ոչ ՀՀԿ-ին, Ոչ ԲՀԿ-ին, Ոչ ՀՀԴ-ին, Ոչ Լուսավորին** վերնագրերով ակնհայտ հակաքարոզչական բնույթի տեսահոլովակներ: ՀՀԿ-ն **Նիկոլի ստերը** խորագրով 11 տեսանյութ է տարածել սոցցանցում իր նախընտրական նշանաբանի վերնագիրը կրող **Եթե մտահոգ ես** էջի միջոցով:

Ո՞վ որքան

Օնլայն ՉԼՄ-ներում ընտրական գործընթացի մասին նյութերի բովանդակային վերլուծության արդյունքում արձանագրեցինք 24 թեմաներ, որոնց մասին խոսել են տարբեր խմբերի ներկայացուցիչներ՝ քաղաքական ու հասարակական ուժերի, սփյուռքի, այլ երկրների ներկայացուցիչներ, հայաստանյան փորձագետներ ու տարբեր ոլորտների մասնագետներ, իրենք՝ լրագրողները եւ այլն:

Ընտրություններին չմասնակցած քաղաքական կուսակցությունների խոսքը հիմնականում հնչել է նոյեմբերի կեսերին, ԿԸՀ-ում հայտերի ներկայացման շրջանում: Մամուլը հանրայնացնում էր ընտրություններին չմասնակցելու մասին նրանց հայտարարություններն ու բացատրությունները: Պաշտոնական քարոզարշավի ժամանակ նրանք լռություն են պահպանել: Բացառություն է կազմել Երկիր ծիրանի կուսակցությունը, որն իր ղեկավարի կամ կուսակցության անունից հայտարարություններ է արել քարոզարշավի ընթացքի մասին, մեկնաբանել է դարաբաղյան թեմայով Իմ քայլը դաշինքի եւ ՀՀԿ-ի ներկայացուցիչների միջեւ ընթացող սուր բանավեճերի ընթացքում հնչած գնահատականներն ու դիրքորոշումները, օնլայն ՉԼՄ-ներում սուր քննադատական գնահատականներ է հնչեցրել ՀՀԿ-ի, ԶԴ/Իմ քայլի եւ Նիկոլ Փաշինյանի հասցեին, հակաքարոզչություն է առաջ մղել ֆեյսբուքում:

Մյուս չմասնակցող քաղուժերը (Ժառանգություն, ՀԱԿ եւ այլն) լռություն էին պահպանում նաեւ ֆեյսբուքում:

Ընտրագանգվածի խոսքն օնլայն հարթակներում – Այս ընտրարշավի ընթացքում, ի տարբերություն 2017 թ. խորհրդարանական ընտրությունների, օնլայն ՉԼՄ-ներում չնչին քանակի են եղել սովորական քաղաքացիների կարծիքները գործընթացի, ընտրություններով իրենց հետաքրքրվածության եւ այլ հարցերի վերաբերյալ : Ընտրագանգվածի խոսքն ու կարծիքներն արտահայտվել են ֆեյսբուքյան տիրույթներում, այդ թվում՝ տարբեր քաղուժերի ու գործիչների էջերում, գլխավորապես՝ մեկնաբանությունների տեսքով:

Մրցակից ուժերի խոսքը - Օնլայն ՉԼՄ-ներում ամենից շատ անգամ հնչել են Իմ քայլը դաշինքի, կառավարության անդամների, վարչապետի եւ ՀՀԿ-ի մեկնաբանություններն ու կարծիքները: Սակայն տարբեր փուլերում, նաեւ՝ առանձին ՉԼՄ-ներում տարբեր առաջնահերթություններով: Այսպես, նախքան պաշտոնական քարոզարշավը բոլոր քաղաքական ուժերից ամենից շատ անգամ ընտրությունների թեմայով խոսել են ՀՀԿ ներկայացուցիչները, իսկ պաշտոնական քարոզարշավի ժամանակ առաջին հորիզոնական է բարձրացել վարչապետի պաշտոնակատարը:


ՀՀԿ-ի խոսքը նախընտրական երկու փուլերում էլ ՉԼՄ-ներում արտացոլվել է գրեթե համաչափորեն: Նույն պատկերն է եղել ԼՀԿ-ի դեպքում նախքան պաշտոնական քարոզարշավը: Իսկ քարոզարշավի 12 օրերի ընթացքում ԼՀԿ-ի խոսքն ամենից շատ անգամ արտացոլվել է 1in.am-ում: Ընդ որում՝ մյուս ՉԼՄ-ներից էական տարբերությամբ:

Խորհրդարան չանցած ուժերի դեպքում կան նույնպես նկատելի պատկերներ: Եթե նախքան պաշտոնական քարոզարշավն օնլայն ՉԼՄ-ների միասնական ցուցանիշներով ավելի շատ անգամ արտացոլվել է ՀՀԴ-ի խոսքը, քան Սասնա ծռեր կուսակցության արտահայտած կարծիքներն ու գնահատականները, ապա պաշտոնական քարոզարշավի ժամանակ այս երկու ուժերը տեղերը փոխել են. Սասնա ծռերը հայտնվել են ՀՀԴ-ից ավելի բարձր հորիզոնականում:


Օնլայն լրատվամիջոցների հետաքրքրվածությունը նորաստեղծ եւ ընտրագանգվածին քիչ հայտնի երեք կուսակցություններով (ԶՈ ՄԴԿ, ՀԶԺ Վերածնունդ եւ Ազգային առաջընթաց) նկատելիորեն քիչ է եղել ընտրական ողջ գործընթացի ժամանակ: Սակայն՝ պաշտոնական քարոզարշավի փուլում այս ՉԼՄ-ների կայքերում ավելի շատ են եղել ԶՈ ՄԴԿ-ի, քան մյուս երկու նոր ուժերի կարծիքները:

**Այս մասին ավելի մանրամասն տես Հավելված, Աղյուսակ 6 եւ 7:
Տես նաեւ ստորեւ բերված գրաֆիկները:**

Ո՛վ որքան է խոսել օնլայն ՁԼՄ-ներում 1 -25.11.2018



Ո՛վ որքան է խոսել օնլայն ՁԼՄ-ներում 26.11 -7.12.2018



ԻՆՉԻ՝ ՄԱՍԻՆ. Ընտրական թեմաների առաջնահերթությունները օնլայն ՉԼՄ-ներում


Նախքան պաշտոնական քարոզարշավը (նոյեմբերի 1-25) մեր ուսումնասիրած բոլոր ՉԼՄ-ներում ամենից շատ շրջանառված թեման ընտրական հին օրենսգրքով արտահերթ ընտրությունների գնալու եւ դրանից բխող մի շարք հարցերն են եղել: Այս ամենի մասին տարակարծիք մեկնաբանություններն ընտրական գործընթացի մասին օրվա լրատվության հետ միասին (դաշինքների կազմավորում, ընտրացուցակների ձեւավորում, թեկնածուների մասին լրատվություն եւ փուլին բնորոշ այլ կարգի տեղեկատվություն) ընտրական օրենսգիրք/ գործընթաց թեման էականորեն առաջ են մղել այդ ընթացքում արձանագրված մնացած խնդիրներից:

Այսպես, ընտրական օրենսգիրք/գործընթաց թեման կազմել է 4 ՉԼՄ-ներում շոշափված թեմաների 2/3-ը եւ ավելին (Lragir.am-79%, Tert.am-72%, Armlur.am -63%, News.am`59%), իսկ 1in.am-ում եւ Aravot.am -ում՝ թեմաների մոտ կեսը (համապատասխանաբար՝ 55% եւ 49%):

Ի տարբերություն մնացած ՉԼՄ-ների այս փուլում միայն երկու լրատվամիջոցում են եղել ուրիշ, համեմատաբար ինտենսիվ լուսաբանված թեմաներ: 1in.am-ում՝ դա նախընտրական քարոզարշավի թեման է (քարոզարշավի հնարավոր ընթացքի, նախքան պաշտոնական ժամկետները քարոզչություն անել/չանելու եւ այլ հարցեր, 18%): Թեման քննարկվել եւ ներկայացվել է 1in.am-ի մշտական (ամենօրյա եւ այլ հաճախականությամբ հեռարձակվող) ինտերնետային թոք-շոու հաղորդաշարերի ընթացքում, վերլուծական հոդվածներում (18%): Aravot.am-ում ընտրական օրենսգիրք/գործընթացից հետո մյուս առավել ինտենսիվ լուսաբանված թեման ներքաղաքական հարաբերություններն են (քաղաքական դաշտում գործող ուժերի, խմբերի, իշխանությունների եւ ընդդիմության միջեւ փոխհարաբերություններ, կուսակցությունների գաղափարական հենքի եւ այլ հարցեր, 17%):

Տես ստորեւ բերված գրաֆիկը, նաեւ՝ Հավելված, Աղյուսակ 8:

Թեմաների վարկանիշ 1-25.11.2018



Պաշտոնական քարոզարշավի ժամանակ (նոյեմբերի 26-դեկտեմբերի 7)


իստեմսիվացել են այլ թեմաներ: Այսպես, բացի Tert.am -ից մնացած բոլոր ՉԼՄ-ներում նախընտրական քարոզարշավի բնույթի ու ընթացքի մասին գնահատականներն ու օրվա լուրերը (նախընտրական քարոզարշավի մասին լրատվություն, ատելության խոսք եւ ընտրակաշառք/այլ խախտումներ թեմաները միասնաբար) գերազանցել են այսպես կոչված առարկայական, սուբստանտիվ թեմաներին (ընտրական օրենսգրքի բարեփոխում, կուսակցությունների մասին օրենքի ընդունում, երկրի տնտեսական եւ այլ բնագավառներին վերաբերող հարցեր, Ղարաբաղյան հակամարտության հետ կապված ուժերի տեսլականներ, բանակ, անվտանգություն, արտաքին քաղաքականություն, կոռուպցիա): Սրանց մի հատվածը ապրիլյան հեղափոխությունից ի վեր մամուլում առանցքային են եղել: Այսպես, 1in.am-ում քարոզարշավի ձեւերի, բնույթի թեմաները միասին կազմել են 31%, News.am-ում՝ 19%, Aravot.am-ում՝ 24%, Armlur.am-ում՝ 24%, Lragir.am -ում՝ 16.6%, Tert.am -ում՝ 2.5: Ընդգծենք սակայն, որ քարոզարշավի մասին օնլայն ՉԼՄ-ներում հրապարակված այս երեք խմբի գնահատականների հեղինակների մեծ մասը կազմել են ոչ թե մրցակից ուժերը, այլ լրագրողները եւ տարբեր առանձին մասնագետներ, փորձագետներ, ՀՀ ներկայացուցիչներ, այլոք:

Նախքան պաշտոնական քարոզարշավն ընտրակաշառքի/այլ ընտրախախտումների ավանդական թեման օնլայն ՉԼՄ-ներում ավելի ինտենսիվ է բարձացվել, քան հաջորդ

փուլերում, այդ թվում նաեւ՝ քվեարկության օրը: Չեն եղել մամուլում այս շրջանի համար ավանդական տեղեկանքների հրապարակումներ առաջադրվող թեկնածուների ֆինանսական կարողությունների եւ տարբեր բնակավայրերում բաժանվող կամ խոստացված ընտրակաշառքների տեսակների մասին: Կարող ենք հավաստել նաեւ ընտրախախտումների մասին դիսկուրսի արմատական փոփոխության մասին:

Եթե նախկին ընտրական գործընթացների ժամանակ ոչ իշխանական ուժերի ներկայացուցիչները հաճախ էին դիմում ընտրագանգվածին՝ հորդորելով քվեարկել ըստ նախապատվության անգամ եթե հնարավոր չէ հրաժարվել ընտրակաշառքից, ապա այս անգամ պարբերաբար ընդգծվում էր, որ քրեորեն պատժելի է ինչպես ընտրակաշառք տալն, այնպես էլ ստանալը, հնչում էին հայտարարություններ այս գործընթացում ընտրակաշառքը որպես երեւույթ բացառելու մասին, հրապարակվում էին ոստիկանության տարածած ծանուցումները ընտրախախտումների համար օրենքով սահմանված պատժաչափի մասին :

Տես ստորեւ բերված գրաֆիկը, նաեւ՝ Հավելված, Աղյուսակ 9:



Լսարանները եւ նրանց արձագանքները

Ընտրությունների հետ կապված նյութերն իրենց ամբողջության մեջ առաջ են բերել օկլայն ՉԼՄ-ների լսարանների շոշափելի հետաքրքրությունը: Առավել մեծ դիտումներ ունեցել են պաշտոնական ընտարշավի ժամանակ հրապարակված տեսանյութերը: Բոլոր օկլայն ՉԼՄ-ների տեսանյութերի զգալի մասի դիտումների քանակը մի քանի հազարից մինչև մի քանի տասնյակ հազարի տիրույթում է եղել: 50 000 եւ Էականորեն ավելի մեծ դիտումներով նյութերը քիչ քանակի են եղել, եւ դրանց մեծ մասում ներկայացված են եղել ասենք ոչ թե մրցակից ուժերի՝ ընտրագանգվածի հետ քարոզարշավների ժամանակ հանդիպումներն ու նրանց համար ելույթները, այլ միցակից ուժերի միջեւ ընթացած հեռակա եւ դեմ առ դեմ բանավեճերը, մեկը մյուսին տրված գնահատականները, բնութագրումները:

Տես Չավելված, Աղյուսակ 10:

Նույն պատկերն է նաեւ մրցակից ուժերի ՖԲ-յան էջերում: Այստեղ նույնպես ավելի շատ արձագանքվել են տեսանյութերով սոցցանցային կոնտենտները, քան միայն տեքստայինները:

Սակայն տարբեր ուժերում եղել են դիտումների տարբեր հիմնական տիրույթներ: Մյուսներից Էականորեն տարբերվել են վարչապետի եւ Իմ քայլը դաշինքի էջերը: Այստեղ ընտրարշավի ընթացքում տեղադրված ուղիղ միացումների 81%- ի դիտումների քանակը 50 000-ից բարձր է եղել՝ հասնելով մի քանի հարյուր հազարի: Տեսանյութերի 33-40% մեծ դիտումներ (50 000 եւ ավելի) ունեցել են նաեւ ԶԶԿ թեկնածուների էջերը (Վիգեն Սարգսյան, Արմեն Աշոտյան): Եվ դրանք կամ ընտրարշավի ժամանակ նրանց մասնակցությամբ մեդիայի նյութերն են եղել, կամ Արմեն Աշոտյանի դեպքում՝ ուղիղ միացումները:

50 000 եւ ավելի դիտումներով տեսանյութեր եղել են նաեւ ԲԶԿ-ից Վահե Էնֆիաջյանի (11%) եւ Սասնա ծռերից՝ Գարեգին Զուքասյանի էջերում (10%):

Մնացած ուժերն այդ քանակի դիտումներ կամ առհասարակ չեն ունեցել, կամ դրանք վերը նշված ուժերի համեմատ ավելի քիչ քանակի են եղել:

Տես Չավելված, Աղյուսակ 11:

Չեռագրությամբ տարբեր էջեր ունեցել են ըստ մեծության Էականորեն տարբերվող լսարաններ (**տես Չավելված, Աղյուսակ 12**): Նկատելիորեն տարբեր է եղել նաեւ սոցցանցային լսարանների արձագանքների մակարդակը այստեղ տեղադրված կոնտենտներին:

Շարունակել է մնացածից Էականորեն տարբերվել վարչապետի էջը ոչ միայն լսարանների չափի, այլեւ նրանց արձագանքների՝ հավանումների, տարածումների եւ մեկնաբանությունների քանակով: Նյութերի 70%-ն ունեցել է 5 հազար եւ ավելի


քանակի նման արձագանքներ: Մնացած էջերում օգտատերերի արած մեկնաբանություններն ու այլ գործողությունները 5000-ի սահմանը չեն անցել: Կան ուժեր, որոնց կյուլերի զգալի մասի (98% - 334, ՕԵԿ) օգտատիրական արձագանքների քանակը եղել է 100-ից մինչև 1000 հավանում, մեկնաբանություն եւ տարածում միասնաբար: Եվ այնպիսի էջեր, որոնց կոնտենտներին լսարաններն էլ ավելի քիչ ուշադրություն են դարձրել: Այստեղ արձագանքների մեծ մասը եղել է մինչև 100 հավանում, մեկնաբանություն եւ տարածում (337, 3ԶԺ Վերածնունդ, Ազգային առաջընթաց):

Տես Հավելված, Աղյուսակ 12:

Քվեարկության օր, առաջին հետընտրական արձագանքներ (2018 թ. դեկտեմբերի 9, դեկտեմբերի 10-24)


Ընտրությունների մասին կյուլերն առավելագույն քանակի են հասել քվեարկության օրը՝ դեկտեմբերի 9-ին: Օրվա լրատվության մեջ որոշ մաս են կազմել ընտրախախտումների մասին հաղորդագրությունները, որոնք ՉԼՍ-ներին փոխանցել են տարբեր ընտրատեղամասերում գործող լրագրողները, դիտորդները, հանձնաժողովների անդամները: Ըստ էության, սակայն, դրանք հաճախ միեւնույն տեղամասերից նույն լուրերն են եղել:

Տես ստորեւ բերված գրաֆիկը



Մրցակից քաղուժերի մեր դիտարկած 20 ֆեյսբուքյան էջերից միայն 9-ում են կատարվել մեկ եւ ավելի գրառումներ քվեարկության օրվա մասին գնահատականներով, կամ պարզապես ֆոտոշարքերով: Մնացածից ավելի ակտիվ է եղել ՀՀԿ-ից Արմեն Աշոտյանի, Լուսավոր Հայաստանի պաշտոնական էջերը: Ֆեյսբուքյան սովորական օգտատերերը այդ օրը գրում էին իրենց ընտրատեղամասում եւ շրջակայքում տեսած պատկերների մասին՝ անհետաքրքիր է, հանդարտ է, չկան մեքենաների ու մարդկանց կուտակումներ եւ այլն:

Տես ստորեւ բերված գրաֆիկը:



ՉԼՍ-ների հետընտրական նյութերի մեծ մասը հրապարակվել է քվեարկությունից հետո առաջին չորս-հինգ օրերին: Այս ընթացքում նյութերի ինտենսիվությունը եւ քանակը համեմատելի էր Նախընտրական ժամանակահատվածի մակարդակի հետ:

Հետընտրական նյութերում տրվել են քաղաքական գնահատականներ ընտրությունների ընթացքի, նշանակության մասին: Առանձնապես քննարկվել է ընտրողների մասնակցության ոչ բարձր մակարդակը, արվել են սրանից բխող բեւեռային եզրակացություններ: Ներկայացվել են նյութեր ընտրությունների արդյունքների մասին (քաղուժերի, առանձին թեկնածուների ստացած ձայները, քվեների պատկերն ըստ տարբեր մարզերի եւ այլն):

Առանձին խումբ են կազմել նյութերն առաջիկայում ողջ քաղաքական դաշտի վերաձեւակերպման, տարբեր ուժերի միջեւ փոխհարաբերությունների մասին: Իշխանություն-ընդդիմություն փոխհարաբերությունների բնույթի, ԱԺ՝ Նոր կազմի, պատգամավորական խմբակցությունների մասին: Որտե՞ղ փնտրել ընդդիմությանը, խորհրդարանո՞ւմ, թե՞ արտախորհրդարանական ուժերի շարքում: Այս հարցով բանավեճեր են եղել նաեւ խորհրդարանական երկու ուժերի՝ ԼՅԿ-ի եւ ԲՀԿ-ի միջեւ:

ՆՈՐ ՕՐԱԿԱՐԳԵՐԸ ՀԵՏԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. 2019 թ. ՀՈՒՆՎԱՐ

Ընտրություններից հետո առաջին ամիսը (2019 թ. հունվար) անցավ մեղիայում Նոր օրակարգերի ինտենսիվ սահմանումներով: Ընդ որում՝ թե իշխանությունների, թե խորհրդարանական եւ արտախորհրդարանական ուժերի մասնակցությամբ:

Այսպես, արձանագրել ենք, որ մեր ուսումնասիրած 6 օկլայն ՉԼՄ-ներում Հայաստանի իշխանությունների ու Նոր օրակարգերի մասին մեկնաբանություններով ու գնահատականներով նյութերը տարբեր ինտենսիվության են եղել: Եվ դա կապված չի եղել ՉԼՄ-ների ավանդական ձեռագրերի հետ: Օրինակ՝ օրվա լրատվությունը միշտ ավելի շատ հրապարակող News.am -ում իշխանությունների մասին գնահատականներով ու մեկնաբանություններով նյութերն ավելի շատ են եղել, քան սովորաբար օրվա իրադարձությունները նաեւ սեփական կամ որեւէ այլ հեղինակի վերլուծությամբ ներկայացնող Aravot.am-ում:

Տես Հավելված, Աղյուսակ 13:

Բոլոր այս նյութերի զգալի մասում (67%) կան հղումներ իշխանություններին՝ կառավարությանը, նրա ստորաբաժանումներին, առանձին անդամներին, իմ քայլը դաշինքին ու նրա առանձին ներկայացուցիչներին, անձանք վարչապետին: Կառավարությունն ավելի շատ անգամ է հղվվել այս փուլի նյութերում, քան վարչապետն ու իշխանական իմ քայլը դաշինքը:


Կան նաեւ նյութեր **իշխանություններ** ընդհանուր ձեւակերպմամբ: Այս դեպքերն ավելի քիչ քանակ են կազմել:

Նոր օրակարգերի մասին նյութերի մոտ 1/3-ը (33%) ներկայացված է առանց որեւէ կոնկրետ հիշատակման՝ **երկիրը, մեր պետությունը, մենք պետք է** ձեւակերպումներով:

Վարչապետին հիշատակումներ բոլորից շատ անգամ արվել են Aravot.am-ում, կառավարության եւ նրա տարբեր ստորաբաժանումների, առանձին անդամների

հիշատակումներ ամենից շատ անգամ արվել են Tert.am-ում եւ Lragir.am-ում, իմ քայլը դաշինքին՝ Armlur.am-ում:

Տես ստորեւ բերված գրաֆիկը, նաեւ՝ Հավելված, Աղյուսակ 14:



Իշխանությունների մասին գնահատականներ ամենից շատ հնչեցրել են լրագրողները, փորձագետներն ու այլ մասնագետները: Այնուհետեւ՝ խորհրդարանական ուժերը, ինքը վարչապետն ու ՀՀԿ-ն: Ոչ խորհրդարանական ուժերից ամենից շատ անգամ հնչել են ՀՀԿ-ի գնահատականները, քիչ անգամ՝ Սասնա ծռերի, ՀՀԴ-ի, Ազատ դեմոկրատների ու Հանրապետություն կուսակցության կարծիքները: Ոչ խորհրդարանական ուժերի կարծիքների մեծ մասն օնլայն ՉԼՄ-ներ են եկել նրանց ներկայացուցիչների ֆեյսբուքյան էջերից:

Քաղաքական ուժերի ֆեյսբուքյան ակտիվությունները տարբեր ինտենսիվության են եղել: **Տես Հավելված, Աղյուսակ 15:**

Սակայն թե խորհրդարան անցած, թե արտախորհրդարանական կուսակցությունների ներկայացուցիչները չեն դադարեցրել իրենց գործողությունները սոցցանցում՝ հստակ լուծելով քարոզչական եւ հակաքարոզչական բնույթի խնդիրներ:

Ֆեյսբուքում ընտրություններից ընդամենը երեք շաբաթ անց շեշտակի բարձրացավ իշխանությունների նկատմամբ քննադատական վերաբերմունքը: Մեկը մյուսի ետեւից ծավալվող քննարկումներից, նաեւ հակաքարոզչական բնույթի գործողություններից յուրաքանչյուրն առաջ էր մղվում կոնկրետ ինֆորմացիոն առիթներով՝

իշխանությունների առաջին հետընտրական գործողություններ, անհաջող հայտարարություններ ու մեկնաբանություններ, շարժուձեւ, հագուկապ եւ այլն:

Ինֆորմացիոն գործընթացների մի մասն ունեցել է ֆեյսբուքյան ծագում, ինչպես օրինակ՝ հունվարին Դավոսյան տնտեսական ֆորումի ժամանակ Փաշինյանի եւ Ալիեւի միջեւ հանդիպման մասին վարչապետի ֆեյսբուքյան ելույթը բավական համառոտ մեկնաբանությամբ: Սա դարձավ ֆեյսբուքում եւ միաժամանակ նաեւ օնլայն ՉԼՄ-ներում Ղարաբաղյան հակամարտության հարցով նոր իշխանությունների հնարավորությունների ու ունակությունների մասին բանավեճի վերսկսման առիթ:

Կառավարության կառուցվածքի օպտիմալացման գործընթացը, որի մասին հայտարարեցին իշխանությունները, դարձավ ինչպես օնլայն ՉԼՄ-ների, այնպես էլ ֆեյսբուքյան քննարկումների թեմա:


Կառավարության տարբեր ստորաբաժանումների աշխատակիցներին ու ղեկավարներին հատկացված պարգևավճարների գումարների, եւ առհասարակ մի քանի ամիս աշխատելու դիմաց արդեն հավելավճարներ ստանալու փաստերի մասին մամուլի հրապարակումները զգալի աղմուկ հանեցին ֆեյսբուքում, խթանելով միանգամից մի շարք խնդիրներով բանավեճեր. նոր կառավարման մեխանիզմների հաստատում, պետական սեկտորում եւ առհասարակ պաշտոնյաներին վարձատրության չափերի սահմանում, գլխավորը՝ բյուջետային գումարների արդյունավետ օգտագործում: Նոր իշխանությունների հետ կապված այս թեմայի վեր հանումը միանգամից ստվերեց իշխանությունների՝ տարբեր ոլորտներում կատարված խնայողությունների, պետական ստորաբաժանումներում սպասարկման չափերի կրճատման մասին տարբեր հայտարարություններից տպավորությունը: Գլխավորը՝ դեմ էր գնում հասարակական տրանսպորտով աշխատանքի գնացող, տարբեր ներկայացուցչական ծախսերը մինչեւ հնարավոր մինիումի հասցնող ու այլ պոպուլյար քայլեր անող նոր իշխանությունների դրական իմիջին, որ ձեւավորվել էր անցած ամիսների ընթացքում: Սկսվեց պետական տարբեր գերատեսչությունների ղեկավարների այս թեմայով հանրային հաշվետվությունների շարքը:

Առանձին պաթոսով վերսկսվեցին Հայաստանում ընդհանուր ինֆորմացիոն մթնոլորտի, խոսքի ազատության, սոցցանցում ընթացող հակաքարոզչական մարտերի, դրանք ուղղորդող ուժերի թեմաներով բանավեճերը: Գլխավորապես, վարչապետի ֆեյսբուքյան ուղիղ միացումներից մեկի ժամանակ նրա մի քանի հայտարարություններից:

Օնլայն ՉԼՄ-ներում ամենից ինտենսիվ շրջանառված թեման կառավարման ինստիտուցիոնալ կառույցների ձեւավորման եւ մեթոդների, քաղաքական դաշտի ֆորմատավորման (ուժերի վերադասավորումներ, նոր ընդդիմություն եւ նոր իշխանություն փոխհարաբերություններ) հարցերն են եղել: Այնուհետեւ՝ արտաքին քաղաքական խնդիրները, տնտեսությունը, Ղարաբաղյան հակամարտությունը, ազատությունների եւ իրավունքների թեման: Մնացած թեմաները շոշափվել են պակաս ինտենսիվությամբ: Այդ թվում՝ ընտրությունների շրջանում նկատելիորեն

իևտենսիվ քննարկվող ընտրական օրենսգրքի բարեփոխման հարցը, կոռուպցիան, սոցիալական խնդիրները եւ այլն:

Տես ստորեւ բերված գրաֆիկը, նաեւ՝ Հավելված, Աղյուսակ 16 եւ 17:



